

Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստը

18.02.2015թ.

Այսօր ՀՀ Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի այս տարվա անդրանիկ նիստը, որը վարում էր մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին 2015թվականի տարեկան աշխատանքային ծրագրի նախագծին, պետական ծրագրերին և դրանց շրջանակներում նախատեսվող միջոցառումներին, ինչպես նաև առաջիկա անելիքներին առնչվող հարցեր:

Մասնավորապես կարևորվեցին քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում, կառուցվող շենքերում, փողոցներում, մայթերում թեքահարթակների կառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման խնդիրները:

Առաջարկվեց նաև ներկայացնել նոր առաջարկություններ տարեկան աշխատանքային ծրագրում լրացումներ կատարելու վերաբերյալ:

Նիստի ընթացքում կարևորվեց նաև հաշմանդամների իրազեկվածությունը՝ համապատասխան տարբեր ծրագրերում ընդգրկվելու համար:

Ամփոփելով նիստը՝ Վ. Դավթյանը հաջողություններ մաղթեց ներկաներին հետագա փոխգործակցության բոլոր գործերում: